Տ. ԵՍԱՅԻ ԱԲԵՂԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(մարտի 16, 2024 թ.)

Տոն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ յիշատակ սոսկալի չարչարանացն նորա եւ մտանելոյն ի վիրապն

Սիրելի՛ հավատացյալ ֆույրեր եւ եղբայրներ,

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ողորմությամբ շուրջ ֆառասուն օր առաջ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, օրհնությամբ ազգիս սրբազնագույն Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի եւ ձեռամբ Իրաքի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տեր Օշական եպս. Գյուլգյուլյանի, ինձ սարկավագակից տասը եղբայրներիս հետ ստացանք ֆահանահայական ձեռնադրություն եւ օծում եւ դարձանք շարունակողը տերունաստեղծ Սուրբ Եկեղեցու հոգեւոր սպասավորության: Այնուհետեւ Մայր տաճարի աստվածահետք Իջման Սուրբ Սեղանի առաջ, չորս եղբայրներիս հետ ծնկաչոք, Աստծուն ուխտադրեցինք սրբությամբ պահել կուսակրոն ֆահանայության ուխտը, հավատով ու նվիրումով ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռին եւ հայ ժողովրդին: Անաղարտորեն պահել ուղղափառ հայրերից մեզ ավանդված դավանությունը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան մնալ մինչեւ մեր երկրավոր կյանքի ավարտը:

Սիրելինե՛ր, ցանկանում եմ երախտագիտորեն իմ որդիական շնորհակալությունը հայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդին՝ ինձ վստահելու, կուսակրոն ֆահանայության պատվին արժանացնելու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուխտյալ միաբանության մեջ ընդգրկելու համար:

Իմ որդիական երախտագիտությունն եմ հայտնում նաեւ Մայր Աթոռի լուսարարապետությանը եւ ձեռնադրող սրբազանին, ինչպես նաեւ Արմավիրի թեմի բարեջան առաջնորդ Սիոն արքեպիսկոպոսին, այսօր այս սուրբ տաճարում՝ բոլորիս մանկության եկեղեցում, ինձ պատարագելու հնարավորությունն ընձեռելու համար:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում ծնողներիս, որոնցից սովորել եմ սիրել Քրիստոսին, ծառայել մեր Սուրբ Եկեղեցուն եւ հայրենիքին:

Կյանքումս անգնահատելի է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դերը՝ ի դեմս տեսչական եւ դասախոսական կազմի, որտեղ ամրապնդվել է սերս առ մեր Սուրբ Եկեղեցին եւ մեր սրբազան հայրենիքը, եւ ամբողջացել ու շոշափելի են դարձել գիտելիքներս վերոհիշյալ բոլոր սրբությունների մասին:

Առանձնահատուկ կերպով ուզում եմ իմ երախտագիտությունը բերել նաեւ Անանիա վարդապետին, որի հոգածու խնամքի ներքո եւ համառ ջանքերի շնորհիվ ես հասակ եմ առել որպես ապագա կուսակրոն եկեղեցական եւ Սուրբ Էջմիածնի նվիրյալ միաբան:

Նաեւ իմ սերն ու երախտագիտությունն եմ ուզում բերել այս Սուրբ Սեղանին սպասավորող սարկավագ եղբայրներիս, որոնք Հայաստանի Հանրապետության տարբեր հատվածներում իրենց ծառայության վայրերից եկել են այս սուրբ տաճար եւ ինձ հետ մասնակցում են եւ աղոթակից են ինձ իմ անդրանիկ Սուրբ Պատարագին. սիրելի՛ եղբայրներ, ցանկանում եմ՝ իմանաք, որ ձեզնից յուրաքանչյուրն անհատապես իմ կյանքում յուրահատուկ դեր եւ նշանակություն ունի:

Սիրելի՛ հավատավոր քույրեր եւ եղբայրներ, նաեւ ամբողջ սրտով աղոթում եմ ամենքիդ համար եւ բերում իմ սերն ու երախտագիտությունը ձեզ, որ այսօր ձեր ներկայությամբ աղոթակից եք մեզ:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ
առ իս, եւ լուաւ աղօթից իմոց»
(Սաղմ. ԼԹ. 2):

Սիրելինե՛ր,

Արդեն շաբաթներ է, ինչ առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին գտնվում է Մեծի պահոց այս աղոթաշատ շրջանում, որի այս գեղեցիկ ընթացքին հանդիպող տոնական օրերի մեջ խորհրդանշորեն զետեղված է մեր հավատքի հոր՝ Հայոց աշխարհի երկրորդ Լուսավորիչ Սուրբ Գրիգորի՝ վիրապում բանտարկվելու եւ չարչարվելու հիշատակության տոնը:

Հայոց պատմությունից մեզ հայտնի է, որ տասներեք երկար ու ձիգ տարի Սուրբ Գրիգորը բանտարկված է եղել խոր վիրապում եւ միայն Տի-

րոջ ողորմությամբ, արքայաքրոջն ուղարկված տեսիլքի շնորհիվ է նրան հնարավորություն ընձեռվել կրկին լինել ազատության մեջ։

Սուրբ Գրիգորը, տասներեք տարի մնալով խոր վիրապում, իրեն ընկերակից ուներ օձերի եւ կարիճների, ապրում էր հանապազօրյա մեկ կտոր հացով եւ անեծքի ու նախատինքի փոխարեն իր բերանից հնչեցնում էր միայն աղոթքներ եւ օրհնություններ։ Իր մտքում պահելով սաղմոսերգուի թերեւս այս խոսքը, թե «Համբերությամբ սպասեցի Տիրոջը, եւ Նա նայեց ինձ ու լսեց իմ աղոթքը» (Սաղմ. ԼԹ. 2), զինվեց համբերությամբ եւ իր հույսը չկտրեց, որ Տերը՝ Հիսուս Քրիստոս, իրեն պիտի այցելի։ Համբերեց եւ Աստծու ողորմությամբ հայոց ազգին Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզությունից շուրջ երկու հարյուր հիսուն տարի հետո վերստին թարգմանեց Քրիստոսին. լուսավորեց մեզ, վերականգնեց հայ ժողովրդի եւ Աստծու միջեւ խզված կապը եւ իրավացիորեն կոչվեց Լուսավորիչ։ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, հետեւելով Քրիստոսի այն խոսքին, որ «եթե մեկը կամենում է գալ իմ հետեւից, թող ուրանա ինքն իրեն, վերցնի իր խաչը եւ գա իմ հետեւից» (Մատթ. ԺԶ. 24), ուրացավ ինքն իրեն, ուրացավ իր ամբողջ փառքը, հարստությունը եւ կյանքում ամեն ձեռք բերածը. արդյունքում շահեց Քրիստոսին եւ մեր ազգի քայլերն ուղղեց դեպի հավիտենական կյանքը եւ եղավ Հայոց աշխարհում սուրբ առաքյալների գործի շարունակողը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Լուսավորիչ Հայրապետը։

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր աշխարհը փոխվել է, փոխվել են եւ մարդիկ։ Մարդու կյանքն ալեկոծված է տարատեսակ արհավիրքներով եւ մարտահրավերներով՝ պատերազմներով, հիվանդություններով եւ բազմապիսի բնական աղետներով, որի մեջ շատ դժվար է պահել հավատը, առատացնել սերը եւ ապրել առաքինի կյանքով։ Շատերն են հիասթափվում, կորցնում լավատեսությունն ու համբերությունը եւ նախընտրում ապրել առանց Աստծու՝ հեռու պատասխանատվության զգացումից։ Սակայն փախուստն Աստծուց եւ պատասխանատվությունից՝ ազատ եւ հանգիստ կյանքի նախընտրության լավագույն տարբերակը չէ։ Բոլորս քաջ գիտենք, որ դյուրին կյանք չի խոստացել մեզ Քրիստոս. մենք Քրիստոսի անվան համար պիտի նախատվենք ու հալածվենք եւ Իր պատճառով մեր մասին ամեն տեսակի չար խոսք՝ սուտ պիտի ասեն։ Սակայն պիտի ցնծանք եւ ուրախանանք, որովհետեւ երկնքում մեր վարձը շատ է, քանի որ այսպես հա-

լածեցին մարգարեներին, որոնք մեզնից առաջ են եղել (հմմտ. Մատթ. Ե. 11–12)։ Այստեղից կարելի է հետեւություն անել, որ դժվարությունները համբերությամբ հաղթահարելու շնորհիվ ենք մենք դառնալու իրական քրիստոնյաներ, որովհետեւ Քրիստոս իսկ մեզ պատվիրում է համբերել՝ քաջ գիտակցելով, որ համբերության պտուղը փրկությունն է (հմմտ. Մատթ. Ժ. 22)։ Իսկ մարդկային կյանքում դժվարություններին համբերությամբ դիմակայելը մեզ կոփելու է ապագայում սպասվող դժվարությունները հաղթահարելու մեջ, որովհետեւ, ինչպես ասում է հին իմաստությունը, եթե չլինեն առվակի խութերը, չի հնչի նաեւ առվակի երգը։ Իսկ այդ երգը քրիստոնյայի համար հրեշտակների հետ Աստծուն փառաբանությունն է։

Ուստի, սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Քառասնորդական պահեցողության այս մնացյալ ընթացքում իմ հորդորն ու խնդրանք է ամենքիդ՝ զերծ մնացեք ինքնաարդարացումից եւ ձեզ ընկերակից դարձրեք ինքնաքննությունը. քննեք ձեր անձերը, քննեք ձեր ամեն օրը, ձեր կատարած յուրաքանչյուր քայլը, ձեր բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքը եւ այդ ամենից զատեք միայն աստվածայինն ու աստվածահաճոն եւ միայն դրանք շարունակեք կիրառել ձեր կյանքում։ Ձեզնից հեռու վանեք յուրաքանչյուր չարը, յուրաքանչյուր բացասականը եւ այն ամենը, ինչը ձեզ հեռացնում է Աստծուց։ Եղեք համբերատար, որպեսզի արժանանաք տեսնելու Աստծու լույս երեսը եւ հրեշտակների հետ փառաբանելու մեր Տիրոջը։

Սիրելինե՛ր, սիրե՛ք միմյանց, աղոթե՛ք մեկդ մյուսի համար։ Ինչպես մեր հավատքի հայրը, դուք եւս համբերությամբ զինվեք կյանքի բոլոր փորձությունների նկատմամբ, ներե՛ք միմյանց, երես մի՛ դարձրեք միմյանցից, ապրեք՝ ձեր սրտում պահելով աստվածային պատվիրանները, եւ Աստծուց խնդրեք, որ ունենաք պատեհությունը՝ ինքներդ ձեզ ճանաչելու։

Սիրելինե՛ր, այսօր ոսկեշուրթն Եսայի մարգարեի բառերով աղոթում եմ Բարձրյալ Տիրոջը, որ ձեզ վրա իջնի Աստծու Հոգին, իմաստության եւ հանճարի հոգին, խորհրդի ու զորության հոգին, գիտության եւ աստվածպաշտության հոգին (Եսայի ԺԱ. 2)։

«Շնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանսդ. ամէն»։